ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2022 թվականի սեպտեմբերի 27-ի №07/11.1/7901-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում հայտնաբերվել է 897.5ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բջջային կապի վերահաղորդակ, որը տեղակայված է Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի №21 հասցեում (գործունեություն իրականացնող անձ՝ «ԳԻԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն),

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ «ԳԻԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի սեպտեմբերի 28-ի №ՍԾ/34.2-Մ2-9/3355-2022 գրությունը, որին ի պատասխան՝ «ԳԻԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտնել է, որ նշված վերահաղորդակը տեղադրվել է «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից և պատկանում է վերջինիս,

գ) հարցի առնչությամբ պարզաբանումներ ներկայացնելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 18-ի №ՍԾ/34.2-Մ2-9/3671-2022 գրությունը, որին ի պատասխան՝ Ընկերությունը 2022 թվականի

հոկտեմբերի 20-ի գրությամբ հայտնել է, որ Նախարարության աշխատա-կիցներից ահազանգ ստանալուց անմիջապես հետո փոխարինել են վերահաղորդակը, ներկա պահին սարքավորման առաջացրած խանգարումները չեզոքացված են, ինչն ըստ Ընկերության՝ հաստատել են նաև Նախարարության աշխատակիցները,

դ) Նախարարության 2022 թվականի հոկտեմբերի 24-ի №07/11.1/8881-2022 և հոկտեմբերի 27-ի №07/11.1/9094-2022 գրություններով ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Վարշավյան փողոցի №4/3 հասցեում (գործունեություն իրականացնող անձ՝ «Տոնուս Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) և Կոմիտասի պողոտայի №12 հասցեում գտնվող «L.Ga» գեղեցկության սրահում (գործունեություն իրականացնող անձ՝ անհատ ձեռնարկատեր Լուսինե Չոլախյան) հայտնաբերվել են 897.5ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բջջային կապի վերահա-ղորդակներ, որոնք տեղադրված են Ընկերության կողմից,

ե) առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 28-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4140-2022 գրությունը, որին ի պատասխան՝ Ընկերությունը 2022 թվականի նոյեմբերի 30-ի գրությամբ հայտնել է, որ Նախարարության աշխատա-կիցներից ահազանգ ստանալուց անմիջապես հետո փոխարինել են վերահաղորդակ-ները, ներկա պահին սարքավորումների առաջացրած խանգարումները չեզոքացված են, ինչն ըստ Ընկերության՝ հաստատել են նաև Նախարարության աշխատակիցները,

զ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Ընկերության գրություններով փաստվել է Ընկերության կողմից առանց թույլտվության 897.5ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 897.5ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի

Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------2022թ.